

ՆՈՐԱՅՐ ԲՅՈՒՋԱՆԴԱՑՈՒ ԿԱՐԱԿԱՆՈՒՑ

Վաստակաշատ հայագետ Նորայր Բյուզանդացու (1845—1915) ստորև հրապարակվող նամակներն ուղղված են նշանավոր հայագետներ Քերովբե Պատկանյանին, Գարեգին Սրվանձտյանին, Ներսես Ակինյանին, Արշակ Չոպանյանին, մխիթարյան միաբան Հովհաննես Քումայանին և Մոսկվայի համալսարանի դոցենտ Լևոն Մսերյանցին: Գրանք ոչ միայն ունեն հայագիտական դգալի արժեք, այլև լույս են սփռում հիշյալ գիտնականների կյանքի ու գործունեության հետ կապված ուշադրավ որոշ դրվագների վրա:

Նամակները, որոնք հրապարակվում են աննշան կրճատումներով, պահվում են Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում (Ֆ. 70, թղթ. 235 II, վավ. 245, № 125, 247, № 1, 35, 248, № 187, 252, № 119, 149, 253, № 124):

ՎԱՐԱՋԴԱՏ ՎԱՐԿԱՆՑԱՆ

1.

2 հոկտեմբեր, 1887
<Ստոկհոլմ>

Վսեմական Տեր Տեր Քերովբե Պատկանյան

Ընկալա զՁեր նամակն 5/17 սեպտեմբերի, ընկալա հինգ ավուրք առաջ և զՁեր ծրարն՝ որում կային Սեբեոսի Պատմությունն, Մաղաքիա Աբեղայի պատմությունն², նշխարք Մատենադարանի հայոց, և Հարություն վարդապետի Ալամգարյանց Չափաբերականքն³: Հույժ շնորհակալ եմ նվերներույդ դոր ինչ խնդրյալ էի և զոր ոչ էի խնդրյալ: Հարություն վարդապետի միայն Քչվառուրջուն սոխակի տաղն ծանոթ էր ինձ, զոր ընթերցած էի ի Բսուզմավեպի 1850 ամին, երես 340, բայց չէի գիտեր, որ թոռն եք այդպիսի վառվուռն բանաստեղծի:

Ես ունիմ հավաքյալ 140-ին չափ ռամկորեն տաղեր՝ հորինյալ ի զանազանից ի դարսն ԺԳ—ԺԷ, է որ անանուն, է որ հայտնի անվամբ. զմեծ մասն տաղիցս զաղափարած եմ ի գրչագրաց ս. Ղաղաբու Կան իմում Տաղարանի 35 տաղք սիրո, 40 տաղք ուրախության, 21 տաղք տխրական, 15 տաղք խրատական, 7 տաղք զղջական, 8 տաղք տոնական, 13 տաղք պատմական: Ըինաս Եվգոկիացով⁴ ունեի միմիայն տաղ ուրախության, վերնագրյալ Գովասանի հերիսայի, որո սկիզբն է «Ի հողո հավասար անձն է». թվական հորինման տարիս է Քրիստոսի 1563, Օտար ոմն գրած է հետևյալ չորս տողն ի սկիզբն տաղին:

«Այս գովասանք հերիսայի,
Ջայս ասացեալ Մինաս դըպրի,
Որ քաղաքաւ էր Թոխաթցի
Հետո մեռավ Լովացտանի»:

ՉՉեր հրատարակած տաղ սորին Մինասա, զորո գոյութիւնն գիտեի, բայց շունեի օրինակ, պիտի հավելում իմ պատմական տաղս: Աբրահամ Անկյուրացվո տաղն առումն Կ. Պոլսի կա իմ տաղարանի ի պատմականս, զաղափարյալ ի ս. Ղազար ձեռն միո ուրուք աշակերտակցածս: Չեր օրինակն սիւլոտ է և թերի, եթե կամիք՝ կհաղորդեմ Ձեզ գիմս:

Մեր ժԲ—ժէ գարուց մատենագրաց գրվածներն կարելի չէ հասկանալ Մխիթարյանց Հայկազյան բառարանով: Ես. Dulaurier-ի Մատթեոս Ուհայեցվո թարգմանութիւնն⁵ հարգի է յուր պատմական ծանոթությամբ, բայց թարգմանութիւն կարի շատ վրիպակք կան: Ես հորինած եմ Բաղդիբ ստորին հայեբեհի⁶ (ժԲ—ժէ գարբ), զոր հետզհետե կճոխացնեմ. զՄաղաքիա Աբեղայի Պատմութիւնն սույն բառագրոցս համար խնդրեցի ի Չենջ, և շատ ուրախ եմ, որ հաճեցար օրինակ մի հայթայթել ինձ: Քանի մի դիտողութիւններ կհաղորդեմ Ձեզ աստե՛ն:

1. «Պուլու Չաքարէ». երես 6.—«Թոռն Բլու Չաքարէի». 14: Կարծեմ ուղղելի է «Պուլու Չաքարէ», «Բլու Չաքարէի»: Պուլու ի ստորին հայերենի կնշանակե փոքր և կարճահասակ: Հովհաննես Երզնկացի ևս որ կարճահասակ էր (ըստ վկայության Ղազարա Ջանկեցվո) կոչված է Պուլու:

2. «Կանայքն իւրեանց ունեին գղականի սուլուլ ի վերանալի ծածկեալ վարագուրով դիպակի. երեսքք զայն պեռեքի, սպանմամբ, դեղով ծեփէին». 7: Ուղղելի է. «ունէին գղականի սուլուլ ի վերայ նալի՝ ծածկեալ շարադուրով դիպակի. երեսքն լայն» և այլն. պեռեքի սպանմամբ դեղով բառերն՝ շարացա իմանալ: Սուլուլ կնշանակե սրածայր. գղ. Pointu. նալ անշուշտ ձիոց նալն է, լուսին, գղ. Fer de cheval. շարագուրով է ըստ Հայկազյանին. տե՛ս անդ շարագոյր:

3. «զի լուսով և անհաս գիտութեամբ». 12: Պիտի լուսով» և այլն:

4. «այլ ոչ ինչ գտին, բայց միայն զվրանին». 15: Գրելի է «զվրանին» այսինքն զվրանսն:

5. «Գնացին... ի բնակութիւնս և յուրդ գահս իւրեանց». 16: Գրելի է միահետ «նու յուրդգահս իւրեանց»: ուրդգահ է թուրքերեն օրտուկլահ, պարսկերեն՝ աւֆերկլահ, այսինքն բանակատեղ:

6. «անկաւ նա ի ցաւն կրսոյ». 25: Գրելի է «ի ցաւ նկրսոյ»: նկրիս է արաբերեն նիգրիս, ոտնացավութիւն, գղ. goutte.

7. «զու այդչափ ոսկի ե՞ր շարակեցիր ինձ ընդդեմ, որ ես չէի եկելու զքո քաղաքս ավերելու, զքեզ կալել» և այլն. 27: Ուղղելի է. «որ ես չէի եկել, ու զքո քաղաքս աւերել, ու զքեզ կալել»:

8. «գոճե մայր». 32: Գրելի է միահետ «գոճեմայր» և կարծեմ նշանակե մատակ խոզ, գղ. Truie, Coche. Հայաստանյայք ցարդ գոճի կոչեն զխոզի ձագն: ԺԳ գարու բժշկարան մի կսե. «Եվ կերակուր (տուր) գոճնի միս, դառին և ուլի». այսինքն՝ խոզի միս կամ խոզի (1 անընթ.) խոզի նվիրյալ տաղի մի մեջ ալ կսվի.

«Գոճամամիսն գին(ւ)ով եփի

Դեղ է ցաւոց արեանբերի».

աստ ևս գոճամամիս (թերևս գոճամիս կամ գոճանամիս) նշանակե խոզի միս: Գոճան, Ագաթանդեղոս, երես 545 (ա. տպ. Մխիթարյան) նշանակե նույնպես խոզ:

9. «Ընդ աուրս ընդ այնոսիկ եկն այր մի ի Մանկու Ղանէն, մուրալ ազագաւ» 33: Ուղղելի է. «եկն այր մի ի Մանկու Ղանէն, Մուղալ ազագաւ»:

10. «նոյնպես և զիւանի անհիւ եւ անգոհիւ լինելն ի մեջ այլազգեացն» 42: Ուղղելի կարծեմ. «Ահիւ եւ անգոհիւ» և յսինքն՝ երկյուղիվ և սրտամոթյամս: Անդոհ, սարսկերեն ենտուհ, նշանակե տրտմութիւն, ցավ:

11. նոր բերդ, 7. դառն դաշտ, 32. կոկոսնոց, 39. շիւ, 45: Գրելի ևն զլիադրավ նոր-Բերդ, Դառն դաշտ, Կոկոսնոյ (այսպես. Կոկյիւտնի), Շիւ, Զանց կենմ գայլ մանունս:

Եթե Հոհան կաթողիկոսի Պատմութիւն, Արիստակես Հաստիվերտցվո, Մատթեոս Ուոյայեցվո և Ստեփ. Ուոպելյանի նոր հրատարակութիւն ուզենաք ընել, սիրով կհաղորդեմ Ձեզ զիմ ուղղութիւնս և երախտագիտությամբ կընդունիմ ի Ձենջ ինչ որ ինձ հաղորդել բարեհաճիք՝ դիտողութիւն, տեղեկութիւն, օրինակս ձեռագիր մատենագրութեանց և այլն և այլն:

Այժմ զբաղյալ եմ Քենասիրի երկրորդ պրակավ⁷, որում պիտի հրատարակեմ տեսութիւն քննական Լեռականութեան Հ. Արսենի Ալտրնյան⁸—աշխարհասրաւ հայերեն ի հինգերորդ դարու: Պիտի հղեմ օրինակ մի Ձեր վսեմութեան:

Տիղիսի նոր-Դարի հուլիս 22-ի թվուն մեջ կարդացի. թե դուք ևս ղԱրարատ և ղԱրարատ ուրիշ ուրիշ լեռներ կհամարեք: Ռուսերեն լեզվի անգետ յլլալովս շկարեմ օգտվիլ ի Ձեր ուս հրատարակութիւնից, բայց եթե շնորհ ընեք հայերեն գրելու ղՁեր կարծիս Արարատա և Սարարատա վերա, մեծավ հաճությամբ կհրատարակեմ զայն ի Քենասիրի:

Եթե շունիք զիմ Գաղղիերեն-հայերեն բառարանն՝ գրեք, որ օրինակ մի հղեմ Ձեզ ի շիշատակ:

Առաջին պրակիս, երես 21, տող 4, ուր գրած եմ «յթ. գարուն Թովմա Արծրունի ևս կգրե Բյուզանդ» (տպագրյալն ի Ձենջ Թովմա Արծրունի¹⁰, երես 275), խնդրեմ այսպես սրբագրեք զգրածս. «Երկրորդ քառորդի տասներորդ դարուն՝ Թովմա Արծրունի (կամ թերևս նորին շարահարողն Անանուն Արծրունին) ևս կգրե Բյուզանդ»:

Հաճեցէք ընդունել վսեմական Տեր, զիմ խորին շնորհակալիս և զմեծարանս:

2.

3 սեպտեմբեր, 1890

<Ստոկհոլմ>

Գերապատիվ Տեր Տեր Գարեգին Եպիսկոպոս Արվանձտյանց

Ընթերցա գիւրուս Աղբարդ¹, զոր հաճեցայք նվիրել ինձ: Հույժ շնորհակալ եմ պատվական նվերիդ համար: Մեծ արժեք ունի մատյանդ, որ լի է բազմապատիկ պիտանի տեղեկութեամբք, ստույգ և մանրամասն ծանոթութեամբք, կարևոր հիշատակարանաց ընդօրինակութեամբք: Ով կընթեռնու զայդ մատյան, կարծե աչոք տեսնել մեր ցանկալի և ավաղելի հայրենյաց այն քաղաքներն և գյուղերն՝ որս Դուք շրջագայած եք: Պէտք էր, որ Ձեզ նման սիրտ և հոգի ունեցող անձն՝ ի Կ. Պոլիս անգործութեան դատապարտվեր: Ո՞րչափ զեղեցիկ սկզբունքներ, ընտիր խորհրդածութիւններ, շահալոր խրատներ

և յորդորներ սփռած եք առատորեն ի մատենիս: Չեզ պես առաքյալք յարկավոր են Հայաստանի գավառաց համար, ուր սերկոտանի դաղաններն» (ինչպես զեղեցկաբար կկոչեք ի հ. Ա. 12) ի հրապարակ ելած են դարձյալ, և զորոց «սխրալի քաջութիւններն», կկարդամ զրեթե ամեն օր՝ ի լրագիրս Ատոկ-Նոյմի: Որչափ իրավամբ կգրեք երես 270 Ա հատորոյն. «Հայաստանի սեզն է ըստ Հայկական խնդիրն և մենք Պետրիկի մեջ կորոնենք զայն»:

Մի անգամ կարդացի զՔորոս Աղբար, բայց կրկին պիտի կարդամ պարապով: Շատ զոհ և ուրախ եղա, զերապատիվ Տեր, որ հայերեն ձեռագիրք չեն վրիպած Ձեր ուղարկութիւնն, և խնամով ընդօրինակիր եք զՀիշատակարանս: Չգիտեմ թե պահած էք զքնագիրն Քորոս Աղբարի. քանի մի տարակույսներ ունեցա, զորս կնշանակեմ ի ստորև, յնդրելով, որ բարեհաճեք ընել և դիմ հարցասիրութիւն զոհացնել:

Հատոր առաջին.

1. — Երես 63, Ավետարանի ՚հիշատակարան մի կա գրյալ ի սկիզբն Մարկոսի, և թվական գրչութիւն կգրվի ՈԶ (Քրիստոսի 1238): Ուրիշ ոտանավոր հիշատակարան մի ևս կա անդ ի վախճան Ջովաննու, ուր կսվի՝

«Յամի վեցհարիւրի
Եւթնից տասանց եւթնեկի».

այսինքն ՈԶ (Քրիստոսի 1228): Արդ Մարկոս չի կրնար գրված ըլլալ 1238-ին և Հովհաննես 1228-ին: Արդոք ՈԶ սխալ է և պետք է ուղղել ՈԶ: Պատմական կարեորութիւն ունի այս հարցումս, վասն զի հ. Ղ. Ալիշան (անշուշտ ի Քորոս Աղբարէ առնելով), նույնպես 1238-ին կղնն Անդուլ անապատի ՚ովանոց լինելն Հեթմո Ա. և Ջապելի (սե՛ս Սիսուան², երես 554, էջ ա):

2. — Երես 115, տող 3, «որ եւ յանբարի ժամանակի» բառերն անմիջապես կից են նախընթաց «տիաւք ծերութիւն» բառերուն, թե քանի մի տող դուրս թողած եք:

3. — Երես 187, Շուշին կկոչվի Կոստանդին Ա. կաթողիկոսի մայրն և ի հ. Բ. 359, Շողիկ: Ո՞ր է ուղիղն:

4. — Երես 231—232 և 233—234, երկու Մաշտոցի հիշատակարաններ կան, որոց համար կսվի թե՛ են ի Լուսավորիչ վանս Տյուրիկո: Ի Բ. հատորի, 337—338 և 338—339 նույն հիշատակարանք կրկնված են, բայց կսվի թե են ի Խարբերդ: Ո՞ր է ստույգ. Տյուրիկ թե Խարբերդ:

5. — Երես 233, Ավետարանի հիշատակարան մի կա ՃԶԹ թվականով. «ի հայրապետութեան տեր Գրիգորի»: ՃԶԹ սխալ կթվի. արդոք ՇԶԹ է ուղիղն, որում ժամանակի կաթողիկոս էր Գրիգոր Գ. Պահլավունի, եղբայրն. Շնորհալու: նույն հիշատակարան ընդօրինակյալ է ի Մատենադարանի նայկական քարղմանութեանց նախնյաց (տպ. Վենետիկ, 1889), երես 161, ուր տպյալ է ՈԶԹ, բայց այս ևս սխալ է, վասն զի այնմ թվականի կաթողիկոս էր Կոստանդին Ա:

Հատոր երկրորդ.

6. — Երես 174, ՊԳ նշանակյալ է արձանագրի Բարձրահայաց վանաց Էկեղեցւոյն: ՊԶԳ կամ ՊԶԳ՞ է ուղիղն:

7. — Երես 271, «Նուշուձորոյ խաչ» գրչալ է. իսկ երես 388 «Խաչանոր»։ Խաչանոր ուղղելի է ետինս։

8. — Երես 295, զույգ նշանակչալ են ՉՂԻ և ՌՂԺԶ, Արդյոք ՉՂԻ ուղղելի է ՉԿԻ, թե ՌՂԺԶ ուղղելի է ՌՂԻԶ։

9. — Երես 392, թիվ 211, ՄՄէ (Քրիստոսի 808) նշանակչալ է Ստեփ. Տարոնեցվո և Ար. Լաստիվերտցվո պատմութեանց ձեռագրին։ ՉՄէ՝ է ուղղելի կամ այլ ինչ։

10. — Երես 463, «ի գավառիս Եգեաց» ուղղելի է, թե պետք է կարդալ Եղեգեաց, կամ այլ ինչ։

Անցչալ ամսո 20-ին գոհցի առ իմ գրավածառ Տ. Հովհաննես Գոնտայան (ի Պայպրլ Հաուզ), որ հանձնե Ձեզ օրինակ մի իմ Գաղղիերեն-հայերեն բառարանն։ Հուսամ ընդունեցաք զայն։

Մատուցանելով գերապատիվ Տեառնդ զիմ խորին մեծարանաց հավաստիս, մնամ խոնարհ ծառա Ն. Ն. Բ.։

Néandre de Byzance Norayr. 15, Fredsqatan Stockholm (Suede).

3.

25 նոյեմբեր, 1890
<Ստոկհոլմ>

Մեծարգո հ. Հովհաննես վ. Թումայան

Ընկալա զՁեր պատվական թուղթն՝ ամսոյս 10-ին թվականավ և զՊանտալեոն քահանայի՛ խոսսն, որո համար հույժ հույժ շնորհակալ եմ Ձեզ և ընդօրինակող ազնիվ եղբորն։ Ունիմ անկատար ցուցակ մի ս. Ղազարու հայերեն գրչագրաց, որում 2 օրինակք նշանակչալ են Մարտին Պետրոսի Առաքելու պատմութիւնն², առանց անուն Պանտալեոնի։ Այս պատմութենն են մսխիք և փողակ բառերն, զորս նոր Հայկազյանն առաջ կրբեր ճշտիվ ըստ Ձեր օրինակին։ Իսկ հ. Ղ. Ալիշան փոխանակ մագրաց կգրե մոզայետաց (Սիսուան, երես 266բ), անշուշտ դիտմամբ հեղելով ի պատճառս թուրքին, բայց կարի անհաջող է փոփոխութիւնդ, զի մահմեդական արաբացիք և մոզայետի շկարին միաբանի։ Պանտալեոնի գրածդ, թեպետ առասպելահոգ, ինչպես կկոչե զայն նաև Ինճիճյան (Ստորագրութիւն ինն Հայաստանեայց³, երես 452, անունն Ռհար), կարևոր էր ինձ Մատթեոս Ուոհայեցվո և Սմբատ Սպարապետի պատմութեանց ծանոթութեանց համար և կկրկնեմ Ձեզ զիմ ջերմ շնորհակալութիւնս։

Կցավիմ ըսել, որ պետք է միակողմ դնենք զUlponis մինչև որ հաջողիմ հղել Ձեզ զUlponis. բացատրեմ։ Դիտեցիք անտարակույս, որ օգոստոս 28-ի թղթիս մեջ խոսեցա զՍտեփ Ստյուռէէ և ոչ զՈւլփոնիսս, պատճառն էր որ շկարացի գտնել զանունդ իմ առձեռն պատրաստ ունեցած բառարաններուս մեջ և իրավունս, քանզի չիք Ուլփոնիս անձն. ուղղելն է Հակոբ Ուլփոնն (Jakob Ulfsson) — շվեդերեն, որ էր արքեպիսկոպոս, և աջակից Ստեփ Ստյուռէի՝ ի հիմնադրութիւն Ուլփոնի համալսարանին։ Կհուսամ, որ կստանամ մետալ մի Jacobus Ulphonsis ուղղիլ փորագրութեամբ. և կհղեմ Ձեզ հանդերձ մի քրասիլիական մետալիվ, որ դարնված է ամին 1840.

և զոր շնորհեց ինձ M. Oscar de Heldenstam, Consul général de Suède et de Norvège a Rio de Janeiro, երբ լսեց, թե հետախույզ եմ մետալներու Ձեր թանգարանին համար:

Բերկրությունամբ և շնորհակալությունամբ մեծավ ընկալա ի ժամանակին զսիրալիր թուղթ գեր. Աբբահորն սեպտեմբեր 10-ի թվականավ: Գեր. Աբբահայրն կրարեհաճի հայտնել նվաստիս, թե միաբանությունդ մատենադարանն բաց է իմ առջև: Այնպիսի մեծ շնորհ մի է այս իբրև զիս աղքատի և գիտությունն ծարավո, որ շգիտեմ թե ինչպես ըստ արժանվույն բացատրեմ զիմ երախտագիտություն: Երբ ի հոկտեմբերի 1876 տարվայն այցելի ի ս. Ղազար և խնդրեցի տեսնել քանի մի հայերեն ձեռագիրս, մերժեցին զիս՝ զայս ինչ և զայն բաղբաղելով. ստույգ պատճառին ետ ժամանակի տեղեկացա, թե «Միաբանությունն չէր կրնար յանձն առնուլ, որ յուր մատենադարանին գանձերն օգտվելով՝ զքո Բաղդիներեն-հայերեն բառարանդ հարստացնես»...:

Նույնպես ընկալա շնորհակալությունամբ և զղերմաներեն ուսումնասիրություն մեծ, հ. Ն. Տաշյանի⁴ Zur Abgar-Sage երես 243 Հանդեսի⁵ տարվույս կգրե հ. Ն. Տ. թե «նաև ըստ Ազաթանգեղեա՝ Տրդատա առաջին անգամ թագավորելը Պրոբոսի ատեն կիյնա և կստիպվինք այն զթաց արշավանքն Ողենատոսի ատեն (266—267) եղածը համարիլ»: Արդեն Ձենոր Ասորի հայտնապես գրած է թե զթաց թագավորին հետ մենամարտեցավ Տրդատ փոխանակ Պրոբոսի. և թե ի Պրոբոսե ընկալավ Տրդատ զթագ արքայությունն. Ձենոր, կսեմ, ոչ այն զոր հրատարակած են ս. Ղազարու հարք ամին 1832 և, որ Իիոկղետիանոս կսե երես 22, այլ Դ դարու ստուգաբանն Ձենոր. մեր այժմու Տարոնո պատմությունն⁶ խարդախյալ է ըստ պատմությանն և աղավաղյալ խանգարյալ ըստ հայերեն լեզվույն:

Ձեր կարծիքն թե ավելորդ է խստիվ քննադատել զաշխարհաբար թարգմանությունն խորենացվո⁷, է նաև իմս. «Չգորք հզոռագոյնս պահանջեսցին», իսկ արդ խորեն վ. Ստեփանն⁸ չէ հզոր ոք: Առաջ քան զթարգմանել զխորենացի. պետք է զբնագիրն հարուցանել և կատարելապես լուսաբանել. մինչև ցարդ հրատարակյալ սուտ և բազմասխալ բնագիրքն խորենացվո՝ անարժան են Աղեքսանդրիո հռչակավոր դպրոցին երևելի աշակերտին:

Տ. Ա. Մ. Գարագաշյանի⁹ հաղթությունն ի վերա խորենացվո է բազում մասամբք աննշան հաղթություն: Որչափ տարբեր է խորենացվո գրչեն ելած Հայոց պատմությունն. որչափ կանխրավինք խորենացվո վերագրելով զյուր ընդօրինակս զամեն տգիտությունս. որչափ անհասկացողությունք և վրիպակր ամեն թարգմանությանս մեծո պատմագրին: Ըստ իս կարևոր հարկ է, որ նախ քննադատական տպագրությունք հրատարակվին մեր ամենայն նախնի մատենագրությանց, և ապա բառարանք, բերականությունք, հայոց պատմություն և աշխարհագրություն, հայ դպրության պատմություն, բայց այնպիսի վատթար ժամանակի կապրինք, ուր փափագողն կարողություն չունի. և կարողն փսփագ չունի կամ վ. Լանգլուայի¹⁰ պես... մարդու կսիրահարի:

Կխնդրեմ, որ հղեք ինձ 1 օրինակ նկարագիր ուսմանց (Գարագաշյանի)¹¹, cartonne 1 օրինակ Պատմություն մատենագրություն հայոց (Ն. Գաթրճյանի)¹² cartonné կամ թղթակազմ, 1 օրինակ Քննական բերականություն արդի հայերեն լեզվի ամբողջ, նույնպես նախաշավիղի¹³

(երեսք 334) և Քերականություն¹⁴ (երեսք 502), Կիսնդրեմ որ լավ կազմյալ ըլլա (կես կաշի և կես թուղթ, և շորս անկյուններն կաշվո կոտորակներով ամրապնդած): Կանուխ տպյալ ըլլա ըստ թղթակազմին՝ Քննական քերականություն արդի հայերեն լեզվի. ի վերո ասաց քան զշորս տողսդ շնորհ ըրեք տպել՝ հ. Ա. վ. Այտրնյան, իսկ ի ստորև՝ խնդրեմ զանց ընեք զերկու տողսն՝ Վիեննա—ՌՀԺէ:

Ջգինս երեցունց մատենիցս հանդերձ ճանապարհի ծախսովք և 1891-ի Հանդիսի բաժանորդագրությամբ կհղեմ միանգամայն, գերմանական մարկի հաշվով, զի Սթոքհոլմի թղթատունն Վիեննայի համար ուրիշ դրամ չընդունիր: Կիսնդրեմ, որ սովոր քարտին պատասխարյալ ըլլա գրոց ծրարն: Նույնպես ծածկույթ 1890-ի Հանդիսին կիսնդրեմ հիշեք. շգիտեմ այս տարվան համար ինչ գույն ընտրած եք. նախորդ երեք տարիներու ծածկույթն կապույտ էր, եթե ունեք կապույտ գույնով, զայն կփափագիմ:

Ներփակյալ կգտնեք Ոսկեբեռանի Մատթեի մեկնության Գ հատորուն¹⁵ անտիպ մի հատված և մի պատառիկ, զոր աղաչեմ մատուցանել առ գեր. Աբբասայրն հանգերձ իմ աջահամբույր խորին մեծարոնք: Այսչափ միայն կարացի ընդօրինակել ամին 1881, զի Գաղղ<իերեն>-հայերեն բառարանին գերի էի և զուրկ ազատ ժամանակե: Երանի թե հաջողեք միում ումեր ի միաբանիցդ, որ ի Կ. Պոլիս՝ ընդօրինակել ամբողջապես զամեն հատվածսն: Կան ի նմին ձեռագրի բազում հատվածք և այլևայլ ճառից. ծայրե ի ծայր ընդօրինակության արժանի է բովանդակ մատյանն:

Մատուցանելով զիմ խորին շնորհակալությունս ընդ պատվասիրական բանից նամակի մեծարգո հորդ, մնամ կատարյալ հարգանք:

Խոնարհ ծառա նորայր ն. Բյուզանդացի:

Կինս կհղե Ձեզ զյուր խորին մեծարանաց ողջուններն՝ շնորհակալությամբ մեծավ ընդ Ձեր ողջունին:

R. P. Jean D^r. Thumaian

Մեծ. հ. Հովհաննես վ. Թումայան

Au Couvent des Mékhitharistes VII. Mekhitharistengasse, 4
Vienne (Autriche)

4.

16 հունվար, 1897
<Ստոկհոլմ>

Մեծապատիվ Տեր Լեոն Մսերյանց

Սիրելի բարեկամ

Մինչդեռ ես կպատրաստվեի թուղթ գրել Ձեզ և մաղթել շնորհավոր նոր տարի, զարմանալի պատահմամբ երեկ ընկալա զՁեր պատասխան գիրն դեկտեմբեր 29-ի (հ. տ.)՝ որով կփափագիք նորոգել զմեր ընդհատյալ թղթակցությունն և նոր տարվույս համար կմատուցանեք ինձ զՁեր ազնիվ բարեմազթությունքն: Շատ ուրախ եղա ընդունելով զգիրդ. շնորհակալ եմ մաղթանացդ, սիրելի բարեկամ (զի այսպես ախորժելի է ինձ կոչել զՁեզ այսուհետև), և փոխարեն կմաղթեմ սրտանց՝ որ ամենայն հաջողությամբ և երջանկությամբ լի ըլլա տարիս թե՛ Ձեզ և թե՛ Ձեր ընտանյաց համար:

Անցյալ տարվո Տունիսի 19-ին (ն. տ.) ես հասի ի Պետերբուրգ շոգենավով ի Ստոկհոլմ, ուր եկավ գտավ զիս կինս հուլիսի 10-ին: Կինս փափագեցավ երթալ ի Մոսկվա, անտի ի Նիժնի-Նովոգորոդ և շատ թախանձեց զիս, որ ուղեկցեմ իրեն, բայց սաստիկ հոգնած ըլլալով և գիտնալով ի վսեմ <ափայլ> Տ. Եզյանցե¹, որ դուր մեկնած եք ի Մոսկվայն, ինչպես և Տ. Խալաթյան² որու հետ տեսնվիլ կբաղձայի, շկարացի ընկերել կնոջս. նա մեկնեցավ ի Մոսկվա մենաորիկ 17 հուլիսի և եղավ ի Hôtel Billo, ուր անցուց երեք գիշեր. ի Մոսկվայն գնաց ի Նիժնի, անտի դարձավ ի Պետերբուրգ, և երկուբայն ի միասին հուլիսի 28-ին մեկնեցանք ի Պետերբուրգ ի Ստոկհոլմ: Մեծապես կցավիմ, որ այնչափ մոտ ըլլալով ի Մոսկվայի՝ բախտ չունեցա զՁեզ գալ ողջունելո, բայց կհուսամ ուրիշ անգամ հասնիլ փափագանացս, զի զկինս Պետերբուրգն ավելի զՄոսկվա սիրեր է, բաց ի փոշվոյն:

Մար իբասա (կամ Աբասա) Պատմութեան բնագիրն գտնվի կամ շոտնվի՝ ես հավատացած եմ, որ զՄար իբասա ստեղծողն Խորենացի եղած չէ. Խորենացի իրոր ունեցած է Մար իբասա անվամբ Պատմություն մի (վավերական թե անվավեր՝ այդ այլ խնդիր է) և ինք ոչինչ հնարած է, ոչինչ կեղծած, ոչինչ ստած: Արդեն գրած եմ սիրելութեանդ այս մասիս, և դարձյալ կսեմ. ով ոտ կկարծե թե «Խորենացի և Մար իբասա միևնույն անձն է» զԽորենացի բնավ չնանաչեք, իսկ հանդգնիլ ըսելն թե Խորենացի ութերորդ դարու հեղինակ է՝ հայ գրականութեան խոր տգիտություն կենթադրե: Կարիեր³ շատ թեթևութեամբ իջավ ասպարեզ, և անչափ կցավիմ, որ Վիեննայի Մեծ <արգո> Մխիթարյանն կարևորություն տվին յուր կարծեցյալ պատմության: Եվ ամեն անգամ, որ առիթ ունեցած եմ, բոլոր գորութեամբ աղաչակած եմ, թե բնդունայն է բնագրատել զմեր մատենագիրս քանի որ շունինք գնոցա բնագրատական հրատարակությունս (recension կամ édition critique): Վերջին անգամ ուղարկեցի իմ De l'Urgence⁴... գրությունս՝ զոր ունիք: Կարիեր թվի թե Խորենացի Պատմության բնագրատական հրատարակության զանհրաժեշտ պետս զգացած է վերջապես («En l'absence d'une édition critique de Moïse de Khoren») և այլն՝ Հանդես ամսօրյա, 1897, հունվար, երես 3, տող 8... Եթե ունենայինք այսպիսի հրատարակություն մի՝ Կարիեր վհե ի վիհ չէր զորեր: Շատ բան զոր ինքն առանց հասկանալու կմեկնե կամ կջանա մեկնել, զյուր ուղիղ մեկնություն ունի իմ Խորենացի քննադատորեն հարգացյալ բնագիրն՝ որ կաշխատիմ ի բազում ամաց. բայց այնպիսի ծանր գործ է իմ գործս՝ որ հույս չունիմ զայն ի գլուխ հանելու և մշտնջենապես և պապանձեցնելու զայնոսիկ, որ շին խղճեր Խորենացիո նման պատկառելի և պաշտելի անձնավորության մի բնդ տիղմ քաշել իբր տգետ, իբր խարդախ, իբր ստախոս: Հավատացեք, սիրելի բարեկամ, եթե իմ վերա տեղային այն նախատիքներն և անարգանքներն, որովք կջանացվի նվաստեցնել զԽորենացի, անչափ չէի վշտանար, որչափ կվշտանամ Խորենացիո համար՝ զոր ի մանկությունս սաստիկ սիրած եմ և մեծարած իբր կատարյալ հայրենասեր մարդ: Եմեն անգամ որ կկարդամ զյուր ողբն, կարտասվեմ տղայու պես:

«Առևր կերեքի» մասին՝ իմ կարծիքս այն է, թե ոամկերեն է կերել, և պետք է ըսել կերայք, զի միայն կերայքն է գրաբար հայերենի հատուկ:

Կորյունու⁵ անցյալ տարի սկսավ տպագրվիլ էջմիածին, և տեսա առ վսեմ <ափայլ> Տ. Եզյանցի 4 թերթս: Ուզած էին զաղբեցնել: Տ. Եզյանց

խնդրեց, որ շարունակեն. կսպասեմ թղթո ի տ. Կ. Կոստանյանցե⁶, որպիսզի տեղեկանամ թե ի՞նչ որոշեցին: Ի նպաստ հայոց հրատարակեցա շվեդերեն brochure մի, Armenians och d, — ras ո՞ճ. կփափագիմ հղել Ձեզ օրինակ մի, բայց չեմ համարձակեր մինչև որ ծանուցանեք ինձ, թե կարիմ հղել. դրվածն անվնաս բան է, բայց գիտեմ զխստություն գրաքննությանդ: Ընդունեցեք զիմ սրտագին խնդակցություն գիտնական վաստակոցդ համար. մեծավ շնորհակալությամբ կրնդունիմ ինչ որ բարեհաճիք հղել:

Խնդրելով որ մատուցանեք զիմ մեծարանաց ողջունսս սխտվական և ալեզարդ հորդ, մնամ բարեկամության վսեմ սիրով:

Ձերդ նորայր

Ինչպես թվեցավ Ձեզ Փարսեցվո Պատմության հառաջաբանին կարգադրությունն, զոր հրատարակեց Լումա իմ ստորագրությամբ Բ հատորի:
M. Lévon Msériantz, Menchikova Bachnia Matson Milowanoff Moscou (Russie).

5.

31 հոկտեմբեր, 1905
<Ստոկհոլմ>

Մեծապատիվ Տեր Արշակ Չուպանյան

Ընկալա զՁեր 23 նոյեմբերի նամակն՝ ներփակյալ ընդօրինակությամբ նահապետի՝ տաղին, «Գիշեր ու ցորեկ կուլամ, ա՛նափ իմ յարբն կու լըսե՞» ի 101 դ. ձեռագրե Ազգային մատենադարանին Պարիսի, և կմատուցանեմ զիմ խորին շնորհակալությունս: Կծանուցանեք թե «Ֆրանսացի մր Bibliotheque-ին կողմն գրած է՝ փակցուած թերթի մը վրա՝ պարունակված նյութերուն ցուցակը, և սա տողը. «Ce manuscrit a été transcrit en 1615»: Մեծապես կհաճեք զիս, եթե Ձեր դյուրութեամբ շնորհ ընեք ընդօրինակել ինձ համար զհիշատակարան 101 դ. ձեռագրիդ՝ որով բացի զըլություն թվականեն՝ տեղեկանամ նաև թե ո՞վ է գրիչն և ուր գրած է. Որչափ ավելի դյուրամբունելի գրով տողեք զնամակներդ այնչափ ավելի կհաճեք զիս:

Կարցնեք թե կա՞ «մարդէ» բացառական: Երես 480, համար 23, տող 1. 2. Ծանիկյանի Հնությունս Ակնագործոյն՝ կգտնեք «մարդուէ»:

Կկարծեք թե «Քալ» ըլլա թերևս նույն ընդ «Քա», լավագույն «Քալա», «Այ փալա լրբբիկ և ամազու:իկ դու». Ոտանավոր պատմություն Աղեֆսանդրի Մակեղանավոյ³. կամ ըստ այլ ձևոցրի, «Այ փալիկ լրբբիկ» տե՛ս Կ. Կոստանյանց, Գրիգորիս Աղթամարցի, 1898, երես 118, համար 29: Գամառ-Քաթիպայի Ազգային երգարանի, 1856, 68 երեսին մեջ կա՝

«Քաղրրցու գօզալ փալին,

Մարդիցր յետ չի մընում».

որ 3գ ծանոթության կմեկնվի «սիրուն կնիկ», ուրեմն գղ. charmante «Դեմ առաւօտի լուսուն գա շրբի ձայնիկն ու բաթուն», «բաթ»՝ է բաղ, գղ. Canard: Ստորին հայերենի գրիչը սովորաբար կգրեն բաթ. ոչ բաղ: — «Անչաք» ուղիղ է, զի ի ստորին հայերենի «չաք» = չափ է, որով և «անչաք» կամ «հանչաք» = այնչափ:

Իմ սրտիս ամենազերմ փափագն այն է, որ ոչ Արփիար Արփիարյան⁴ դՁեղ վշտացնե, ոչ դուք զնա: Ազգին ներկա հուսահատական վիճակին մեջ՝ կրաղձամ, որ ամեն հայ փակե զյուր անձնական հաշիվներու տետրակն, և զրադի հասարակաց գործով, յուրաքանչյուր ըստ յուրում կարի և շափու: Անօրին մահմեդականք... ջարդեն դմեղ, պե՛տք է որ զրագետք ալ զիրար վիրավորեն և փորձին բարոյապես սողանելու: Բավական չե՞ն մեր անցյալ երկպառակությունք և ատելությունք, որ քանզաժ են մեր հայրենի տունն: Փոխադարձ սերն և հարգանք, հոգվով ու սրտով միությունն միայն՝ բարվո ակնկալություն մի կրնան տալ մեզի:

Դառնանք առ նահապետն: Եթե ուսումնական նոր ճանապարհորդության գյուրություն և դիտավորություն ունենաք՝ խորհուրդ կուտամ Ձեզ երթալ ի Միլան, և Ամբրոսյան մատենադարանի⁵ զրապետեն տեղեկանալ՝ թե ինչ եղած են փրանկիսկոս Ռիվոլայի⁶ ձեռագիրներն ետ նորա մահվան: Ռիվոլա և յուր հայ (վանեցի) գործակիցներ ապահովապես ունեցած են ի ձեռին նահապետի տաղերուն օրինակ մի, ինչպես կհայտնվի: Նահապետի բազում բառերեն՝ որ կգտնվին ի Ռիվոլայի հայերեն-լատիներեն բառարանին, տպագրություն Միլանու 1621 տարվոյն: Արդյոք Ռիվոլայի ձեռագիրներն մտած են Ամբրոսյան մատենադարանն, և այդ ձեռագրաց մեջ կգտնվի՞ նաև նահապետի տաղերուն կատարելագույն օրինակ մի: Նահապետ կսե յուր տաղին՝ «Ա՛յ իմ գեղեցիկ պատկեր» տողք 26—27:

«Մահալօքս ի վար կու գի՛ իմ եարին շունըն զիս ի խած,
Իմ եարն ի դռնեն ի դուրս՝ «չիխ, մուռտառ, թող ըզնա ի բաց»...

Ձնույն բանն կկրկնե և ի տաղին «Գիշերս ևս ի բուն էի» (որ ձեզ անծանոթ մնացած է) տողք 31—34:

«Մահալլովն ի վար կու գի՛ լոկ տեսայ դռնակ մ՛ալ ի բաց,
Գըլխակս ալ ի նես կալի՛ իմ եարին շունըն զիս, ի խած»:
Իմ եարն ալ ի դուս վագեց. «չըխ» ասաց, գալերու պատռած,
«Ստոր ի՞նչ խածնել պիտի, ադ ի մեր կըրակ է վառած»:

Անկարացած էի հասկանալ զայս շի՛խ կամ շը՛խ (զոր դուք մեկնած եք «Հանդիմանություն», նահապետ Քուչակի Դիվանը⁷, երես 133 բ, նույնացնելով ընդ ոսմկականին շիխ=թուրքերեն յոսոն, որմն և շիխել): Արդ՝ Ռիվոլայի օգնությամբ իմացա, որ շիխ և շըխ նույն են թուրքաց հոշթ, Իեփեբ բասծին հետ. «Դի դի և շի շի. vox indeclinabilis ad fugandos canes» երես 115 [այսինքն՝ բառ անհոլով առ ի հալածել զշունս], և դարձյալ՝ «չըխ Vox ad fugandos canes» երես 374.— «չըխել. Canes fugare» [հալածել կամ փախուցանել զշունս] անդ:

Ուրիշ կարևոր բան մի. 1867—1868 ամաց մեջ ծանոթ էին ինձ 12 անանուն սիրո տաղք, բոլորն ալ սբանչելի, նարեկյան 7—3—5 դաշնակավոր շափով զրված, գոհար վարդըն վառառեալ (ի վեհից, վարսիցն արփենից): Ի 10 մայիսի 1895 ընկալա ի հանգուցյալ Կարապետ Եզյանցե զ՛այնեզ Տեվկանցի⁸: Կարդալով զնախերզն և զտաղն «Սովական գիշերս ի բուն՝ ես երկու շրջան մանեցի», երեսք 27—45, ոչ ինչ վարանեցա «Նահապետ Քուչակի» վերագրելով և զայն 12 սբանչելի տաղս սիրո, քանզի հարյուրավոր անանուն տաղերու մեջ իսկույն կճանաչվին նահապետի տաղերն իրենց շքնաղ իմաստներով:

ու ձևերով և բաշարվեստ տաղաչափությամբ. և ես ամենայնիվ նահապետի կուստղաճեցնեմ զայն երկտողն՝ որ կգտնվի սիրո անանուն մի տաղի մեջ, որո հորինողն շատ հավանական է, որ ըլլա նույն ինքն նահապետն.

«Քե հազար կենայ և հազար այլ զայ,
Ամենուն մեջրն գու ես աշքարայ»:

Տեվկանց 1852—1853-ին ծանոթացուց մեզ զանուն նահապետի, զրելով. «նահապետ վարպետ (մականվան Քուչակ) խառակոնսցի»։ Առյուծ, նախերգ, երես ժև. տողք 8—9: Բայց հ. Ղևոնդ Ալիշան արդեն իսկ 1870-ին գրած է երես 125 յուր Հուշիկի⁹ մատենին երկրորդ հատորուն. «Այս ժՁ գարուս մեջ ծաղկած են երգիչը կամ տաղասացեալը Մկրտիչ Տարսենցի, ...Քուչակ Հառակոնսցի»։ Մեր գտած է Ալիշան զանունը՝ որ նույն է ընդ Տեվկանցի, «նահապետ Քուչակ խառակոնսցի»։ Ես 1867—68 ամաց մեջ հանդիպած չեմ անվանդ ի Տաղարանս ս. Ղազարու ցուցի այլ և այլ երիտասարդ Մխիթարյանց զՀուշիկին գոր շէին տեսած. խնդրեցի որ փնտռեն Ալիշանի թողածու թղթերուն մեջ, ըսին թէ ոչինչ գտեր են։ Արդյոք Պարիսի, Լոնտրայի¹⁰ կամ եվրոպական ուրիշ քաղաքներու հայ ձեռագրաց մեջ գտած է Ալիշան «ԿՔուչակ Հառակոնսցի» և արդյոք, Ամբրոսյանն Միլանու. խուզարկեցեք կաղաչեմ ի հայ տաղարանս Պարիսի, և եթե գտնեք՝ ուրախացիք և զիս ալ ուրախացուցեք:

Երբ չրատարակվին նահապետի տաղքս՝ պիտի հղեմ Ձեզ մի օրինակ. Մաղթելով Ձեզ զորություն և կորովություն, հանդերձ յիուրի հաջողությամբ, մնամ ամենայն մեծարանոր

Նորայր:

Néandre de Byzance Norayr Sant Angelo, Ponte dei Frati, 3536, Il P. Venise (Italie). Monsieur A. Tchobanian Redacteur de la Revue „Anahit“ Rue La Bruyère, 17 Paris

6.

28 նոյեմբեր, 1905
<Ստոկհոլմ>

Մեծապատիվ Տեր Արշակ Չուպանյան

Շնորհակալ եմ ամսույս 12-ի նամակիդ որ հասավ առ իս 16-ին, և պատվական Անահիտ հանդիսիդ 1905 հունվար—նոյեմբեր համարներուն: Հղեցի Ձեզ այսօր զիմ Հայկական բառաֆենոլոյուն, զքննադատություն նուպարյան բարգմանոյուն Վիկտոր Հյուգոյի նոտր-Տամի, զՔենասիւրի Ա և Բ պրակս, զորս թերևս չունիք: Հույժ ուրախ եմ, որ անդու կուսումնասիրեք զմեր հին և միջին մատենագրությունս: Զգրություն «բաթ» կգտնեք ի Հայկական բառաֆենոլոյունս, երես 109, տողք 2—3: «Լ' Օքսերուա» հնչումնն (Քենադատոյուն նոտր-Տամի—երես 24, տող 4) կարծեմ ուղիղ է, որչափ կհիշեմ՝ Պարիսի գաղղիացվոց բերանեն ալ օքսերուա» լսած եմ, ոչ ալ օսերուա»: Բայց նուպարյանն յուր թարգմանության առաջին հատորոյն 42 երեսն գրած է նաև «Սեն ժերմեն զ' Օլսեր»։ այս զ' Օլսեր սխալ է ըստ գաղղիական ակադեմիո բառարանին (տպ. 1878), և գրելի է ո՛ Օսեր. ակադեմիան կգրե ի նշանագիրն x., x, tantôt a le Son de cs joints ensemble... tantôt celui de l'S forte, comme dans An.xerre, Bruxelles և այլն:

Չեր ընդօրինակութիւնն «Գիշեր ու ցորենկ կու յամ» ի զոր հատկապես ինձ համար հաճեցաք կատարել՝ բոլորովին նման չէ հրատարակածիդ. ես միակ վավերական պիտի բռնեմ զընդօրինակութիւնդ, բայց երկու բան կբաղձայի գիտել. ի 10 դ տողին գրած եք «Կուվազեմ օր մտնամ ի ներս կուվախիմ օտար մարդուէն». մինչդեռ ի հրատարակութեանդ (երես 51, Խ.) կկարդամ կուզեմ, և Երես 120, ծան. 47, նշանակած չի գործութիւն ձեռագրին կու վազեմ. մոռացած եք: Դարձյալ, ի հրատարակութեանդ, Երես 52, ԽԴ. տող 2, գրած եք «Պագնէլու տեղ», և Երես 120, ի ծան. 56, կնշանակեք «ձեռագրին մեջ՝ պա՛ննելու». ընդօրինակութիւնդ է պագնէլու:

Ի նամակիդ նոյնմբերի 23 գրեցիք, թի «դուանա հնդիք» անհասկանալի է Ձեզ: «Ա՛յ իմ դրուանա հընգիկ» (ո՛չ հնդիկ)՝ կթարգմանվի «Ո՛վ իմ ՚ին գեղեցիկս», բայց այնպիսի «գեղեցիկ»՝ որ երեսն ունի ծին կամ ծներ (գղ. Srains de beaut'e). տես ի Դեորգ Տեր Հովհաննիսյանի Պարսկերեն-հայերեն Բառարանին՝ տիլրիլնէ (= դուանա) = հին, և հինտիվ (= հնդիկ) = ա նշանակութիւն՝ հնդիկ. բնիկ Հնդկաստանի. — Թ նշանակութեան՝ սեվանիշ գեղեցիկ (այլաբանութեամբ):

Նահապետի տաղերուն հրատարակութիւնն ինձ «հանձնված» գործ է, և հանձնողն կփափագի որ ըստ կարի փութով ավարտեմ: Երեք ամսն ի վեր կաշխատեմ անընդհատ, և տակաւին հասած չեմ և ոչ ի քառորդ գործոյս, որ շատ ընդարձակ է և մանրակրկիտ: Ունիմ 25 տաղեր (որոց ոմանք տաղիկն են և պատառիկք. 4, 8, 11, 12, 13 տողերով): 12 տաղք և մեկ պատառիկ են ի ձեռագրաց ս. Ղազարու, զորս ընդօրինակած եմ 1867—68 ամաց մեզ, մնացյալքն՝ աստի և անտի: Կփափագիք որ անտիպ քառյակներուս մեկ օրինակը հղեմ Ձեզ, բայց այս անկարելի է, զի կանցնին քան զ100, և ժամանակս չի ներեր: Լեռ ի հաճել զՁեզ ցույց կուտամ Կոստանյանցի նոր ժողովածուին՝ Բ պրակին² մեջ 2 տաղիկ և 1 տաղ որ վրիպած են թե՛ աչաց Կոստանյանցի և թե՛ Ձեր:

Լեռուին՝ «Այ իմ մարգըրտէ շարոց», Երեսք 53—54.

Երկրորդ՝ «Ասի թե սիրեմ ըզբեզ», Երեսք 52—53.

Երրորդ՝ «Գիշերս ես ի դուրս ելա», Երեսք 55—57. Երեքն ալ ողորմելի հրատարակութիւններ, ի սխալ ընթերցվածներով և կաղութեամբք. թող զսխալ մեկնութիւնն «հավալա = պարտստեր», Երես 54, ծան. 4: Ավասիկ տաղիկն «Ասի թե սիրեմ ըզբեզ», հարգարյալ, ինչպես յույս պիտի տեսնե իմ հրատարակութեան. այսու զաղափար մի կստանաք աշխատութեանս.

2. «Ասի թե սիրեմ ըզբեզ»

Ընդունեցեք սիրո բարեններս: Նորայր:

² 11 և 12 տողերուն վերջին անդամը կարելի է ևս սրբագրել.

որ գայ ի ծոցրդ [ու] թոռմի.

որ գայ ի ծոցրդ [ու] բացուի:

15 ապրիլ, 1911
<Վենետիկ>

Սիրելիդ իմ Հ. Ներսես Ակիմյան

Ընկալա զՁեր մարտ 22-ի պատվական նամակն:

Շնորհակալ եմ այն գովութանց՝ որովք կհաճիք պատվել զիմ երկասիրությունս, «Բառաբանութենեն մինչև Կորյուն Վարդապետ անմոռանալի հատորներն»: Եթե ստանամ զիմ ավելի քան զհիսունամյա դժվարին աշխատութանց օրինավոր վարձս և զտպադրութանն ծախս, սիրով կհրատարակեմ՝ բայց ձրի տալ զայնոսիկ հասարակության, և որ առավելն է՝ զծախս հրատարակությանցն ալ իմ վտիտ քսակն վճարել, կարելի՞ բան է: Ո՞վ ձրի կաշխատի, և ո՞վ ձրի կգտնե զյուր օրական պարենիկն: Յոթն տարիս ի վեր ի Վենետիկ եմ, և բնավ կարևորություն չտրվեցավ ինձ. եկան դնացին, լսեցին և խոսեցան, տեսան և զննեցին, և ուր որ էի՝ միշտ հոն եմ. ոչինչ եղավ, և ոչինչ ըլլալիք ունի: Վհատություն, տրտմություն և հուսահատություն. այս եղած է մինչև այսօր իմ բաժինս:

Եվագրի՜ 10դ երեսին «ահագին սխալն» կգտնվի առաջին և երկրորդ տողերուն մեջ. «Մաքրութիւն հոգոց: Սունակ լիզոյն ասի». ուր ի ծանոթության 1 նշանակյալ է թե հույն բնագիրն փոխանակ «Սունակ լիզոյնի» ունի *ΤΙΕΧΤΕΡΟΝ*, որ ինչպես լավ կսեք՝ Եզեկիել², Ա. 4, թարգմանյալ է «Ակն բազմագունի»: Բայց զի՞նչ է «Սունակ լիզոյն» կամ «Սունակ լիզոն» ըստ «բ» ձևագրին, ըստ որում և նոր Հայկազյանն ի բառն «Սունակ»: որ և կգրե հունարենն *ἰσχυρὸς* (չորմէ լիզոն), մինչդեռ C. Alexandre-ի Հունարեն—Փաղղիերեն ընտիր բառագրոց մեջ *ισχυρὸς* շունի բնավ «Սունակի» (զղ. Essien) նշանակություն: Ընդմեջ գարերով առաջ «Սունակ լիզոն» կարողացած է զԵվագրի լուծմանքն հորինող այ վարդապետն ևս³. «Հոյնք լիզոն ասեն սունակի», կամ «չսունակ լիզոնը. ոմանք գայն ասացին, թէ թեալք լցեալ էր կառքն» և այլն և այլն (տես ընդարձակ ի «Սունակ» նոր Հայկազյանին): Ուղիղ ընթերցվածն է. «մաքրութիւն հոգվո (կամ ըստ Ձեզ՝ հոգոյս)՝ սունակ[ա]լի գոյն ասի»: Ձայս սունակալ կգտնեք երկիցս և Ոսկեբերանի ճառից հատորին (ընդդեմ Անոմյանց, Գ. երես 590),—«իբրև գտեսութիւն սունակալի... իբրև զնմանութիւն սունակալի». ուր Եզեկիել, Ա. 4 և 27, Ը, 2, լսված է «Բազմագունի ակն», = *ΤΙΕΧΤΕΡΟΝ* Եվագր, ի նմին 10դ երեսի, տող 9, կսվի սառնագոյնն». ընդ որում համեմատեցեք և զՈսկեբերանին (ընդդեմ Անոմյանց, Գ. երես 597, տող 14 ի ստորե), «Քարն սառնագոյն», իմ Փաղղիերեն—հայերեն բառագիրս, անգիտանալով զԵվագրի սունակ[ա]լի, երկբայական երկցած էր ինձ Ոսկեբերանին սունակալ. ջնջելի են հարցական նշանքն (?) զորս դրած եմ ի բառսն Ambre jaune, Carabé, Succin.

Ամին 1879, ի 4. Պոլիս, հաղորդեցի հանգուցյալ ազնիվ S. Սերոբեի Ալիշան զիմ «Հավաքումն հայերեն ականց պատուականաց», խնդրելով, որ ճշտե զգաղղիերեն և զթուրքերեն հոմանիշսն, Ահա թե ինչ գրեց սունակալի համար. «Արժանի քննության, և ինձ հավետ նոր իմն ձայն, Կարծեմ զնշանակություն «սունակալին» շոշափեցի. թե չէ ստույգություն, գեթ հետազոտելի: Ի վերջին էջն գրյալ էիր Emerau de Jardineuse, զոր և մեկնեցի իոուսլից

զմեռութիւն: Արդ՝ ի թուրքերէն բացատրութեան, որ ավանդութեամբ անցյալ թվի, որժամ ակն մի՝ որ ունի շղանման սպիտակ խոռոչս ի ներքս, որ և սառնատեսիլ իմն է, անվանին զայնս պուզլու, սառնալիւ Առ կվրոպացիս Jardinage ասի այս խառնակութիւն ի թափանցիկ ակունս, որ նվազեցուցանեն զգինս ակին: Իսկ «տեսութիւն սոնակալի» ասելով, կարե իմանիլ ակն մի սոնակալ, այսինքն կալեալ ի սառնից, իբրև պուզլու թաշ կամ մյունեֆեր:— Գիտելի է արդ զի opale, բազմագունի ակն, բովանդակն կազմյալ է ի զանազան գունից որք արգելին զթափանցիկ լինել նորին. որպես ցեղ մի ազատից, Agate irisee կոչեցեալ, նմանի opale-ի, և սա կարե ևս կոչիլ սոնակալ»:

Պատիվ կհամարիմ ինձ զհրավերդ նոյնմբերի ժողովածուիդ համար. մտադյուր կընդունիմ զայն, և կհղիմ Ձեզ, հանդերձ լուսանկարովս, յնոր Ազաթանդեղի եւ նոր Ղ. Փարսկցոյ զոյզն ճաշակս: Ազաթանդեղի պիտի հիշեմ զհատածն 167 երեսին (տպ. Մալխասյանց)՝, տողք 2—3. «Բայց եթե, էին տարրաւորք (Հրեշտակքն)՝ ապա երեւելիք և ոչ աներեւոյթք. և առնասաբակ ոչ ումե՛լ երեւեալ»՝: Հրատարակիչն չէ հասկացած ամենկին զմիծս բանին, ինչպես և ի բազում այլ տեղիս: Ուղղելի է. «Բայց եթէ էին տարրաւորք (հրեշտակքն)՝ ապա երեւելիք—և ոչ աներեւոյթք—, և առնասաբակ—եւ ոչ ումե՛լ [ումե՛լ]—երեւեալ»։ այսինքն՝ «եթե Հրեշտակներն նյութական (կամ մարմնավոր) արարածներ ըլլային, այնժամ տեսանելի կըլլային, ոչ թե անտեսանելի, և հավասարապէս ամենուն կերեւային, ոչ բե միայն ոմանց»։ Իսկ ի Փարսկցովո պիտի հիշեմ զբառն պատըշքաւ, երես 114, Մալխասյանց հրատարակութիւնն, տող 24, որու թե՛ ընթերցվածն սխալ է, և թե՛ այլևայլ մեկնութիւնքն որ տոված են. «զաչն, ուխտ», «անդարձագիր կամ վավերական մուրհակ», «Դաշինքի վաւերական գիր», «երդումն կամ կնիք»։ Ուղղելի է. պատըշքաւ (ուղղական պատըշք, և ոչ պատըիւր), և է պարսիկ բառն փառաշք, զոր Գեորգ Տեր Հովհաննիսյան կմեկնէ. «փոխարեն հատուցումն բարի. փոխարինութիւն բարյաց»։ Փարսկցի բսել կուտա ուրեմն Պերողի ցԴյուտ կաթողիկոս. «Եթե զիմ կամս կատարես, ես ալ փոխաբէն կու տամ քեզ եւ յու ցեղիդ եւ որու որ ուզես զայդ գործ (կաթողիկոսութեան)՝ հաւիտենական իշխանութեամբ»։— «Իբր 4 էջ հանդիսի» կսեք հղելի հողվածիս համար. ես հասկացա այժմու հանդիսիդ 4 էջ, այսինքն՝ երկու երես, այնպե՛ս է:

16 մարտի թղթիս մեջ՝ ուր կհիշեմ յազակին», սխալմամբ գրեցի «(Հ. Ամս. 1890)», փոխանակ 1910. Եթե կպահեք զիմ նամակս՝ քերելով փոխեք զայն խնդրեմ:

Մաղթելով Ձեզ սուրբ Չատիկ, քաջողջութիւն և հանգստութիւն, մնամ ամենայն սիրով. ն.

Հ. Գ. կգրե C. Alexandre յԱլեքսիս, chez les anciens poètes, sorte de métal, composition métallique d'or et d'argent, chez les écrivains pastoriens, Ambre jaune, Succin՝ Մեր «Սոնակալն» կարծեմ և ոչ միայն կհարմարի, և այս է բուն պատճառն՝ հարցականով գրած ըլլալուս յ Ambre, jaune և այլն: Նաև նվագրի բանին՝ որում «հոգոյ մաքրութիւնն»՝ նամեմատյալ է սոնակալի գունոյն», թվի թե սպիտակ կամ կաթնորակ քարի կակնարկվի՝ որպիսի է opale. Խնդրեմ պարապով քննեք թե ա՛յլ թարգմանիչք Եղեկեիի և մեկնիչք՝ ի՞նչ հասկացած են զբերայական բառ բնագրին՝ Շնորհակալ եմ նվթաղյա՞ հատածին քննութեան:

ն.

ՄԱՆՈՒԿՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.

- 1 «Պատմութիւն Սերնոսի եպիսկոպոսի ի Հերակլն», ի լոյս ած Ք. Պ., ՍՊԲ, 1879:
- 2 «Մաղաքիս Արեղայի պատմութիւն վասն աւզին նետողաց», ի լոյս լած Ք.Պ., Ս. Պետերբուրգ, 1870:
- 3 Հարություն վ. Ալամդարյան, Զափարեբականք, Ս. Պետերբուրգ, 1884:
- 4 Մինաս Թոխաթեցի (Եվդոկացի, 1510—1622)—երիտասարդ տարիներին բնակութիւն է հաստատում Հնաստանի Կամենից քաղաքում, որտեղ կար հայկական համայնք: Այնուհետև նա հոգեւոր դատարանում ստանում է նոտարի պաշտոն: Նամակում բերվող քառյակը գրել է տաղի արտադրող Հակոբ Երեցը:
- 5 Mathieu d'Edesse, Recit de la première Croisade. Extrait de la Chronique et traduit de l'arménien d'après quatre manuscrits de la Bibliothèque du couvent de St-Lagare à Venise par Ed. Dulaurier, Paris, B. Duprat, 1850.
- 6 Անտիպ է. պահում է Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում:
- 7 «Քննասեր», պրակ 1, 2, Ստոկհոլմ, 1887:
- 8 Արսեն Այտրեյան (1825—1902)—հայագետ, Մխիթարյան միարան (Վիեննա): Գրել է քերականական դասագրքեր, աշխատակցել է «Եվրոպա» և «Հանդես ամսօրյա» պարբերականներին:
- 9 «Բառգիրք ի գաղղիերեն լեզուէ ի հայերեն», հորինեաց նորայր ն. Բյուզանդացի, Կոստանդնուպոլիս, 1864:
- 10 «Թովմայի վարդապետի Արծրունույ Պատմութիւն տանն Արծրունեաց», ի լոյս լած Ք. Պ., Ս. Պետերբուրգ, 1887:

2.

- 1 Գարեգին վ. Սրվանձտյանց, Քորոս Աղբար, հ. Ա., Բ., Կ. Պոլիս, 1879, 1884:
- 2 Ղևոնդ Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885:

3.

- 1 Պանտայեոն քահանան գրել է «Ճառք» (Մատենադարան, ձեռ. № 8179) և «Վկայաբանութիւնք» (նույն տեղում, ձեռ. № 9296):
- 2 Առաքել վարդապետը (XV դ.) գրել է «Պատմութիւն նոր նահատակացն Ստեփանոսի վարդապետի և Պետրոս քահանա խիզանեցույ 1424» (Մատենադարան, ձեռ. № 5313):
- 3 Ղուկաս Ինճիճյան (1759—1833)—հայագետ, Մխիթարյան միարան (Վենետիկ): Հիմնել է «Տարեգրութիւն», «Եղանակ Բյուզանդյան» աշխարհարար առաջին պարբերականները, Կ. Պոլսում հիմնել է «Արշարունյաց ընկերութիւնք», գրել է «Աշխարհագրութիւն լորից մասանց աշխարհի», «Բարապատում» քաղմահատոր երկերը: Նրա կարևոր գործերից է նաև «Ստորագրութիւն հին Հայաստանեայց» գիրքը (Վենետիկ, 1822):
- 4 Հաչոբոս Տաշյան (1866—1933)—հայագետ, Մխիթարյան միարան (Վիեննա): Խմբագրել է «Հանդես ամսօրյան», թողել է գիտական հարուստ ժառանգութիւն, մասնավորապես կազմել է «Գուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարյան մատենադարանին ի Վիեննա» (Վիեննա, 1895—1896):
- 5 Նամակագիրը շփոթել է: Գույց տրված աղբյուրում («Հանդես ամսօրյա», 1890, էջ 243) տպագրված է Հ. Տաշյանի մի այլ հոդվածը՝ «Պատմական արժեք Ազաթանգեղա» (էջ 241—249): Այստեղ և այլուր հանդիպող «Հանդես» բառը վերաբերում է «Հանդես ամսօրյա» պարբերականին:
- 6 «Պատմութիւն Տարօնոյ, զոր թարգմանեաց Ղևոնդ Ասորիս, Վենետիկ, 1832 և «Հովհաննա Մամիկոնեանի եպիսկոպոսի Պատմութիւն Տարօնոյ», Վենետիկ, 1889:
- 7 Մովսէս Խորենացի, Հայկական պատմութիւն, Մոսկվա, 1889 (թարգ. և Ստեփանն):
- 8 Ստեփանոս Ստեփանյան (Խորեն Ստեփանն, 1840—1900)—պատմաբան-բանասեր, խրմ-

քաղիք, գրող, հմրագրել է «Հայկական աշխարհ» և «Մանկավարժնոց» հանդեսները: Աշխարհարար և թարգմանել Մովսես Խորենացու Հայոց պատմությունը, որը տպագրվել է «Հայկական աշխարհ» պարբերականի էջերում և ապա լույս տեսել առանձին գրքով (1889):

9 Անտոն Գարագաշյան (1818—1903)—պատմաբան, իրիստոփա, մանկավարժ և հասարակական գործիչ: Գրել է մի շարք դասագրքեր, խմբագրել է «Ժաշակ ոսկեղեն» զարդանախակի հանդեսը: Առավել արժեքավոր է նրա «Քննական պատմություն Հայոց» գործը (Տ. 1—4, Թիֆլիս, 1895): Մամուլում հանդես է եկել լրագրամթիվ «Շողակներով»:

10 Վիկտոր Հանգյուս (1829—1869)—Ֆրանսիացի արևելագետ, հայագետ: Զբաղվել է նաև Կիլիկիայի հայկական թագավորության պատմության ու մշակույթի հարցերով:

11 Ա. Գարագաշյան, նկարագիր ուսմանց, որ է ընդունելի պատմության, հարկ և օգուտ յուրաքանչյուր մասսանց զբաղիտությունը, Վիեննա, 1845:

12 Հովսեփ Գաբրիելյան (1820—1882)—հայագետ, Մխիթարյան միաբան (Վիեննա): Գրել է «Տիեզերական պատմություն ի սկզբանե աշխարհի ցմեր ժամանակ» (Վիեննա, 1840), «Պատմություն մատենագրության Հայոց» (Վիեննա, 1851) և այլ մենագրություններ ու չղովածներ:

13 Արսեն Այտրնյան, Քննական թերականություն աշխարհարար կամ արդի հայերեն լեզվի, Վիեննա, 1866: Այստեղ է գտնվում նաև նախաշավիղը:

14 Արսեն Այտրնյան, Քերականություն աշխարհարար կամ արդի հայերեն լեզվի, Վիեննա, 1867, 1883:

15 «Շովհանեսու Ոսկերիանի Կոստանդիանուպոլսի եպիսկոպոսապետի Ավետարանագիրն Մատթեոս», գիրք առաջին, երկրորդ, երրորդ, Վենետիկ, 1826:

4.

1 Կարապետ Իզյան (1835—1905)—հայագետ, հասարակական գործիչ: Նրա առավել աչքի ընկնող աշխատությունն է «Сношение Петра Великого с армянским народом», (СПб. 1898):

2 Գրիգոր Խայրյան (1858—1912)—հայագետ, հասարակական գործիչ, մանկավարժ, Հաղարյան ճեմարանի և Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր:

3 Ավգուստ Կարիեր (1838—1902)—հայագետ, արևելագետ, Փարիզի արևելյան լեզուների դպրոցի տնօրեն: Նրա հայագիտական աշխատությունները վերաբերում են հայ մատենագրությանը:

4 Norayr de Buzance, De l'Urgence d'une édition critique des textes arméniens, Rome, Tip. R. Accad, 1892.

5 «Կորյուն վարդապետ և նորին թարգմանությունը. Գիրք մակաբայեցվոց՝ եվթաղ Աղեթսանդրացի, Ազաթանգեղոս և Փավստոս Բյուզանգ», հանդերձ դիտողությամբ, տեղեկությամբ և լուսարանությամբ զրեց նորայր Ն. Բյուզանդացի, Տիֆլիս, 1900:

6 Կարապետ Կոստանյանց (1849—1920)—հայագետ, մանկավարժ: Պաշտոնավարել է Գևորգյան և Հաղարյան ճեմարաններում որպես տեսուչ, ունի բազմաթիվ բանասիրական ու պատմագիտական երկասիրություններ: Առաջիններից մեկն է, որ հրատարակել է միջնադարյան հայ բանաստեղծների գործերը:

5.

1 Նկատի ունի նահապետ Քուչակին:

2 Հ. Ժանիկյան, Հնությունը Այնա, Թիֆլիս, 1895:

3 Այս գիրքը գրել է Մակեդոնացու զորավար Կալիսթենեսը: Հետագայում այդ երկի հեղինակի շուրջը կասկածներ են առաջացել: Ուսումնասիրողների մի մասը գտնում է, որ Կալիսթենեսը չէ հեղինակը, որից և առաջացավ նրա «Կեղծ» մականունը: Հակորոս Տաշյանը մանրամասն թնություն է եղբարկել «Ստույն Կալիսթենա վարուց Ալեքսանդրի» գիրքը (Վիեննա, 1892):

4 Արիփար Արփարյան (1850—1908)—գրող, գրականագետ, հրատարակախոս, հասարակական գործիչ, «Մասիս», «Հայրենիք», «Նուսարեր», «Իրակ» պարբերականների խմբագիր:

5 Վատիկանը, ձգտելով Արևելքում կաթոլիկությունն ամրապնդել, հատուկ դպրոցներ էր հիմնում՝ միսիոներներ պատրաստելու նպատակով: Այդ դպրոցներում դասավանդում էին Արևելքի ժողովուրդների լեզուներ, այդ թվում նաև հայերեն: Նման մի կրթարան էր Ամբրոսյան դպրոցը, որ հիմնադրել էր կարդինալ Ֆրեդրիկո Բոտոմետոսը Միլանում՝ XVII դ. սկզբում: Այն ուներ տպարան, ինչպես և մատենադարան:

6 Ցրանչիսկո Ռիվոլա (1590-ական—1670-ական թվականներ)—մանկավարժ, բանասեր, բառարանագիր: 1610-ական թվականներին հրավիրվել է Ամբրոսյան դպրոց՝ որպես հայագիտության դասախոս: Նա գրել է կարդինալ Ֆրեդրիկո Բոտոմետոսի կենսագրությունը, հայերենի քերականություն, կազմել և հրատարակել է հայերեն—լատիներեն բառարան (Միլան, 1621, Փարիզ, 1633):

7 Արչակ Զոպանյան, Նահապետ Բուշակի դիվանը, Փարիզ, 1902:

8 Արիստակես վրդ. Տեվկանց-Սարգսյան—գրող, բանասեր, բանահավաք: Վարագա վանքում աշակերտել է Մ. Խրիմյանին: Նամակագիրը նկատի ունի «Հայերգ մեղեդիք, տաղք և երգք», հավաքեց և հրատարակեց Արիստակես վարդապետ Տեվկանց գիրքը (Թիֆլիս, 1882):

9 «Ընդիվեր Հայրենյաց հայոց», հ. 1, 2, Վենետիկ, 1869, 1870:

10 Խոսքը լոնդոնի մասին է:

6.

1 Գևորգ Պայատացի Տեր-Հովհաննիսյան, Բառարան պարսկերեն ըստ կարգի լայկական այբուբենից, Կ. Պոլիս, 1826:

2 «Նոր ժողովածու», Բ պրակ, բաղդատությունը հրատարակեց Կարապետ Կոստանյանց, Վաղարշապատ, 1892:

7.

1 Նամակագիրը նկատի ունի ույն փոխառյալ-մատենագիր Եվագրի Պոնտացու (346—400) «Սրբոյ Նորն Եվագրի Պոնտացոյ վարք և մատենագրութիւնք թաղմանեալք ի յունէ ի հայ բարբառ ի հինգերորդ դարու» աշխատությունը, որը 1907 թ. Վենետիկում հրատարակել է Բ. Սարգիսյանը:

2 Եզեկ. Ա, 4:

3 Եվագրի «Լուծմունք» չորիսն է Գրիգոր վարդապետը (Մատենադարան, ձեռ. N° 5049):

4 Ստեփանոս Մալխասյան (1857—1947)—հայագետ, թարգմանիչ, բառարանագիր, մատենագիտական և լեզվաբանական բաղձաթիվ ուսումնասիրությունների հեղինակ:

5 «Ազաթանգեղայ Պատմութիւն հայոց», աշխատությունը Գ. Տեր-Մկրտչյան և Ստ. Կանայանց, Տիֆլիս, 1909:

6 «Ղաղարայ Փարպեցոյ պատմութիւն հայոց և թուրք առ Վահան Մամիկոնեան», աշխատությունը Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանի, Թ., 1904:

7 Եվթաղի մասին գրվել են բաղձաթիվ հոդվածներ, սակայն ուսումնասիրողները դեռևս չեն կարողացել պատասխանել այն հարցին, թե ո՞վ է Եվթաղը կամ արդյո՞ք եղել է այդպիսին: Նրա անունով հայտնի մատենագրությունը V դ. թարգմանվել է հայերեն: Հրատարակությունը տես «Մատենագրութիւնք Եվթաղի», հրատարակեց հ. Արիստակես Վարդանյան, Վիեննա, 1930: